№ 231 Դեկտեմբերի 11 (23) 1881 Դեկտեմբերի 11 (23) № 231

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Ղոանային համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաազգացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ „ՄՇԱԿ“

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐԸ

ԵԿՈՂ **1882** ԹԻՆ

(ՏԱՍՆ ԵՒ ՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն ղիրքով և նոյն պրոգրամմայով։

ՊՐՈԳՐԱՄ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II. Առաջնորդող յօդուածներ, III. Ներքին տեսութիւն, IV. Արտաքին տեսութիւն, V. Խառն լուրեր, VI. Հեռագիրներ, VII. Ֆելիետոն կամ Բանասիրական, VIII. Յայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ, 10 ռուբլ է, կէս տարվան 6 ռ., իւրաքանչիւր ամսին 1 ռուբլ։ Հատով համարները 5 կոպէկ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետևեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Անգլիա։ Ֆրանսիա։ Իտալիա։ Գերմանիա։ Նամակ Թիւրքիայից։ — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Դաւիթ բէկ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Պ. Բաղդասար Տէր-Միքայէլեանց դնեց մեր խմբագրութեան մէջ պ. Քիւրքճեանի ժողովածուն և վճարեց մեզ 20 ռուբլ։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են որ դեկտեմբերի 2-ին հասաւ Բագու պ. Սաֆրազեանցի թատրօնական խումբը որ ներկայացումներ պէտք է տայ այդ քաղաքում։ Նոյն տեղից մեզ գրում են, որ Երուսալէմի վանքի միաբան Մամբրէ վարդապետը սկըսել է ժողովարարութիւն իր վանքի համար և հաւաքել է արդէն 700 ռուբլ։

—

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են հետևեալը։ «Կարծես այս տարի մի առանձին ախտ է եկել հայ ուսանողների վրա. չար բաղդը դարձեալ մի զոհ տարաւ մեր միջից։ Չէ անցել վեց ամիս և ահա չորս լինկեր ենք կորցրել հիւսիսի սառնամանիքներում։ Ուրեմն չորս անդամ պակասեց կարճ ժամանակում Կովկասեան հասարակութեան միջից։ Մինթէ կովկասեցիները չեն խղճայ իրանց երիտասարդ որդկերանց, որոնց իրանք ենթարկում են ամեն տեսակ նեղութիւններին, ուղարկելով հեռու հիւսիս բարձրագոյն ուսում ստանալու նպատակով։ Դժուար է մեզ ապրել հիւսիսում. որ մէկին դիմանաք՝ պարապմունքներին, սառը, մեզ համար անսովոր կլիմային, թէ չքաւորութեանը։ Մինթէ կովկասեցիները ուշադրութիւն չեն դարձնի իրանց զաւակների դրութեան վրա, նրանցից տարած բազմաթիւ զոհերի վրա, մեռածների ծնողների լացի վրա։ Թող հաւաքվին բոլոր կովկասեցիները՝ ռուսները, հայերը, վրացիները և դիմեն մեր բարեխնամ կառավարութեանը խնդիրքով որ թոյլ տայ մեզ հիմնել մեր սեփական համալսարան Թիֆլիսում։ Եթէ չէք կարող օգնել մեզ, ներկայս սերունդիս, գոնէ խղճացէք մեր յետագաներին։»

—

Կարդացինք Գ. Զ.-ի պատասխանը «Մեղուի» մէջ։ Եթէ Գ. Զ. այնքան ջերմ պաշտպան էր միշտ բէալականութեան բեմի վրա և ինչպէս ինքն հաստատնում է, մինչև անգամ յօդուածներ է գրել այդ մասին հին «Մեղուի» մէջ, ինչիցն է որ երբ Կ. Պոլսից նոր եկաւ հայոց այժմեան խումբը և մենք գրեցինք նրա ուղղութեան անյարմարութեան մասին, այն ժամանակ Գ. Զ. լուռ էր և, որքան յիշում ենք, նոյն իսկ «Մշակի» դէմ էր գրել նոյն «Մեղուի» մէջ։ Երևի այն ժամանակ այնպէս էր հարկաւոր, իսկ այժմ ուրիշ կերպ։ Դարձեալ մի անճշդութիւն. մենք սկսել ենք մեր գրական գործունէութիւնը ոչ թէ 1872 թվից, այլ 1865 թվից և այդ ժամանակից անընդհատ գրել ենք հայոց պարբերական հրատարակութիւնների մէջ մինչև «Մշակի» հրատարակելը։

—

Քանի մի օր է որ ձիւնը եկած է Թիֆլիսում և քաղաքիս փողոցներում բալխիրներով են մաք գալիս։ Մենք չենք յիշում որ ուրիշ տարիները ձմեռը մեզանում այդքան վաղ սկսվէր։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

„Standard“ լրագիրը առանձին նշանակութիւն է տալիս Վիէննայի իր թղթակցի հեռագրին, որի մէջ ասված է, որ Դանցիգի տեսութենից մի ամիս առաջ պէտք է անբաւականութիւն պատահէր Ռուսաստանի և Աւստրո-Ունգարիայի մէջ։ Իտալիան գաղտնի բանակցութիւններ էր կատարում Ռուսաստանի հետ և պատրաստ էր նրա հետ դաշնակցութիւն կապել Աւստրիայի դէմ։ Իշխան Բիսմարկ, գերմանական դեսպանից հօմում տեղեկութիւն ստանալով այդ մոտդրութեան մասին, նախազգուշացրեց Աւստրիական կառավարութեանը, կայացրեց Դանցիգի տեսութիւնը և ոչնչացրեց ռուս-իտալական դաշնակցութեան նախագիծը։ Դրանից յետոյ Իտալիան շտապեց փոխել իր քաղաքականութիւնը և բարեկամանալ Աւստրիայի հետ։ Այդ նը-պատակով իտալական թագաւորը և թագուհին այցելեցին աւստրօ-ունգարական կայսրին։ Հումբերտ թագաւորի մինիստրները պատրաստականութիւն յայտնեցին մասնակցել աւստրօ-գերմանական դաշնակցութեանը, յուսալով, որ Աւստրիան կը համաձայնի վերադարձնել Իտալիային Տրենտինօ կամ Իտալիայի մի մասը, որ դեռ Աւստրիայի իշխանութեան տակ է։ Բայց այդ առաջարկութիւնը սառնութեամբ ընդունվեցաւ աւստրիական կառավարութենից։ „Standard“ լրագրի կարծիքով այդ յայտնութիւնները ապացուցանում են՝ առաջինը՝ եւրօպական խաղաղութեան անհաստատութիւնը և երկրորդ աւստրօ-գերմանական դաշնակցութեան ոյժը։ Բերլինի և Վիէննայի լրագիրները առանձին նշանակութիւն չեն տալիս „Standard“ լրագրի թղթակցի պատմութեանը, չը նայելով, որ նա բաւական հաւանական է։

ՖՐԱՆՍԻԱ

—

Ֆրանսիական սենատը նոյեմբերի 28-ի նիստին հաւանութիւն տուեց կրեդիտին դեկտեմբերի 2-ի զոհերի ընտանիքները վարձատրելու համար և այնուհետև սկսեց քննել կրեդիտ նշանակելու հարցը Յունիսի տրշաւանքի համար։ Վիճաբանութիւնների ժամանակ դուքս Բրոլի մի ազդու ճառ արտասանեց այն վիրաւորանքի դէմ, որ հասցնում են սենատին, առաջարկելով նրան սահմանադրութեան վերաքննութեամբ ինքնասպանութիւն գործել։ Բրոլի խոստովանվում է, որ Յունիսի արշաւանքի համար պատասխանատուութիւնը ամբողջապէս ընկնում է նախկին մինիստրութեան վրա, բայց մի և նոյն ժամանակ այժմեան մինիստրութենից նա պահանջում է բացատրութիւններ Յունիսի տրշաւանքի մասին։ Հայոց բանակները, ինչպէս յիշեցինք, տեղաւորված էին երեք կէտերի վրա։ Այդ երեք կէտերից, որպէս երեք դռներից, բացվում էին երեք մուտքեր, որ տանում էին դէպի բերդը։ Բանակներից մէկը գտնվում էր Գեղվայ գետի ձորամիջում. այստեղ էր Բայինդուր իշխանը, Մէլիք-Փարսադանը և Ալեքսանդիլ գնդապետը։ Երկրորդ բանակը գտնվում էր Հալիձորի գետի վերին կողմի վրա. այստեղ էր Մխիթար սպարապետը իր զօրապետների հետ։ Իսկ երրորդ բանակը գտնվում էր Հալիձորի գետի ներքին կողմի վրա. այստեղ էր Դաւիթ-բէկը իր զօրապետների հետ։ Հալիձորի գետը և Գեղվայ գետը, կորելով միմեանց, կազմում էին մի եռանկիւնի, որի մէջ դրած էր բերդը։ Իսկ երեք բանակների իւրաքանչիւրը զետեղված էր այդ եռանկիւնին կազմող գծերի վրա, որոնք ուրիշ ոչինչ չէին, եթէ ոչ, խոր ընկած և անտառախիտ լեռներով պատսպարված ձորեր, որոնց միջով անցնում էին յիշեալ երկու գետերը։ Այս միջով անցնում էին յիշեալ երկու գետերը։ Այսպիսով բերդից ելքը դէպի ամեն կողմ փակված էր։ Ասլամազ-Կուլի-խանը իր ամրոցում պաշարված էր, որպէս մի գազան իր որջի մէջ։ Որսորդները սովորաբար գազանների որջի մուտքի առջև մուխ են դնում, որ նրանք դուրս գան իրանց դարանից։ Այդ միջոցի փոխարէն ծառայում էր հայոց թնդանօթների ծուխը, որ աւելի թանձրացնում էր դիւերային մթութիւնը։

Դաւիթ-բէկի վրանի վարագոյրները իջեցրած էին։ Նա միայնակ էր իր վրանում, որպէս մի օտարա-

---

մէջ։ Եթէ Գ. Զ. այնքան ջերմ պաշտպան էր միշտ բէալականութեան բեմի վրա և ինչպէս ինքն հաստատնում է, մինչև անգամ յօդուածներ է գրել այդ մասին հին «Մեղուի» մէջ, ինչիցն է որ երբ Կ. Պոլսից նոր եկաւ հայոց այժմեան խումբը և մենք գրեցինք նրա ուղղութեան անյարմարութեան մասին, այն ժամանակ Գ. Զ. լուռ էր և, որքան յիշում ենք, նոյն իսկ «Մշակի» դէմ էր գրել նոյն «Մեղուի» մէջ։ Երևի այն ժամանակ այնպէս էր հարկաւոր, իսկ այժմ ուրիշ կերպ։ Դարձեալ մի անճշդութիւն. մենք սկսել ենք մեր գրական գործունէութիւնը ոչ թէ 1872 թվից, այլ 1865 թվից և այդ ժամանակից անընդհատ գրել ենք հայոց պարբերական հրատարակութիւնների մէջ մինչև «Մշակի» հրատարակելը։

—

Քանի մի օր է որ ձիւնը եկած է Թիֆլիսում և քաղաքիս փողոցներում բալխիրներով են մաք գալիս։ Մենք չենք յիշում որ ուրիշ տարիները ձմեռը մեզանում այդքան վաղ սկսվէր։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

„Standard“ լրագիրը առանձին նշանակութիւն է տալիս Վիէննայի իր թղթակցի հեռագրին, որի մէջ ասված է, որ Դանցիգի տեսութենից մի ամիս առաջ պէտք է անբաւականութիւն պատահէր Ռուսաստանի և Աւստրո-Ունգարիայի մէջ։ Իտալիան գաղտնի բանակցութիւններ էր կատարում Ռուսաստանի հետ և պատրաստ էր նրա հետ դաշնակցութիւն կապել Աւստրիայի դէմ։ Իշխան Բիսմարկ, գերմանական դեսպանից հօմում տեղեկութիւն ստանալով այդ մոտդրութեան մասին, նախազգուշացրեց Աւստրիական կառավարութեանը, կայացրեց Դանցիգի տեսութիւնը և ոչնչացրեց ռուս-իտալական դաշնակցութեան նախագիծը։ Դրանից յետոյ Իտալիան շտապեց փոխել իր քաղաքականութիւնը և բարեկամանալ Աւստրիայի հետ։ Այդ նը-պատակով իտալական թագաւորը և թագուհին այցելեցին աւստրօ-ունգարական կայսրին։ Հումբերտ թագաւորի մինիստրները պատրաստականութիւն յայտնեցին մասնակցել աւստրօ-գերմանական դաշնակցութեանը, յուսալով, որ Աւստրիան կը համաձայնի վերադարձնել Իտալիային Տրենտինօ կամ Իտալիայի մի մասը, որ դեռ Աւստրիայի իշխանութեան տակ է։ Բայց այդ առաջարկութիւնը սառնութեամբ ընդունվեցաւ աւստրիական կառավարութենից։ „Standard“ լրագրի կարծիքով այդ յայտնութիւնները ապացուցանում են՝ առաջինը՝ եւրօպական խաղաղութեան անհաստատութիւնը և երկրորդ աւստրօ-գերմանական դաշնակցութեան ոյժը։ Բերլինի և Վիէննայի լրագիրները առանձին նշանակութիւն չեն տալիս „Standard“ լրագրի թղթակցի պատմութեանը, չը նայելով, որ նա բաւական հաւանական է։

ՖՐԱՆՍԻԱ

—

Ֆրանսիական սենատը նոյեմբերի 28-ի նիստին հաւանութիւն տուեց կրեդիտին դեկտեմբերի 2-ի զոհերի ընտանիքները վարձատրելու համար և այնուհետև սկսեց քննել կրեդիտ նշանակելու հարցը Յունիսի տրշաւանքի համար։ Վիճաբանութիւնների ժամանակ դուքս Բրոլի մի ազդու ճառ արտասանեց այն վիրաւորանքի դէմ, որ հասցնում են սենատին, առաջարկելով նրան սահմանադրութեան վերաքննութեամբ ինքնասպանութիւն գործել։ Բրոլի խոստովանվում է, որ Յունիսի արշաւանքի համար պատասխանատուութիւնը ամբողջապէս ընկնում է նախկին մինիստրութեան վրա, բայց մի և նոյն ժամանակ այժմեան մինիստրութենից նա պահանջում է բացատրութիւններ Յունիսի տրշա-

---

—Նա միշտ մեզ է գալիս, ասաց զինուորներից մէկը։

—Գիշերները քուն չունի, աւելացրեց միւսը։

—Ասում են, տարէնը միայն մի անգամ է քնում, զատկի աւագ շաբաթի օրը, խօսեց երրորդը։

—Ինչու անպատճառ զատկի աւագ շաբաթի օրը։

—Նրա համար, որ Աստուած վեց օրում այդ աշխարհը ստեղծեց, իսկ եօթներորդ օրում, որ շաբաթ էր, ինքն էլ քնեց, հանգստացաւ։

Զինուորի բացատրութիւնը բոլորին հաճելի թվեց։ Նա գրից տեղեակ մարդ էր, փոքր հասակից վարդապետների մօտ սպասաւորութիւն էր արել։ Իսկ ծրքան ճիշտ էր նրա ասածը, հասկանալի է, միայն այսքանը ճշմարիտ էր, որ Ներսէս սրբազանը շատ փոքր էր քնում, երբեմն անցնում էին օրեր, որ ամենևին չէր քնում։ Նրա մի այսպիսի խստակեցութիւնը առիթ տուեց ժողովրդի մէջ իր վերաբերութեամբ զանազան լեգենդների ստեղծվելուն։

Բարձրահասակ մարդը դանդաղ քայլերով անցաւ բանակի միջից, մօտեցաւ մի առանձնացած վրանի, որ լուսաւորված էր փոքրիկ լապտերով։ Այստեղ պառկած էին մի քանի հիւանդներ, որոնք նոյն օրվայ կռիւի զաշտում վէրք էին ստացել։ Մի քանի կնիկներ, հաւաքված հայոց մերձակայ օթաներից *) խնամք էին տանում վիրաւորներին։

*) Օթայ նշանակում է խաշնարածների օթևան, չադրներում, լեռնային արօտատեղերի վրա։

Հայոց բանակները, ինչպէս յիշեցինք, տեղաւորված էին երեք կէտերի վրա։ Այդ երեք կէտերից, որպէս երեք դռներից, բացվում էին երեք մուտքեր, որ տանում էին դէպի բերդը։ Բանակներից մէկը գտնվում էր Գեղվայ գետի ձորամիջում. այստեղ էր Բայինդուր իշխանը, Մէլիք-Փարսադանը և Ալեքսանդիլ գնդապետը։ Երկրորդ բանակը գտնվում էր Հալիձորի գետի վերին կողմի վրա. այստեղ էր Մխիթար սպարապետը իր զօրապետների հետ։ Իսկ երրորդ բանակը գտնվում էր Հալիձորի գետի ներքին կողմի վրա. այստեղ էր Դաւիթ-բէկը իր զօրապետների հետ։ Հալիձորի գետը և Գեղվայ գետը, կորելով միմեանց, կազմում էին մի եռանկիւնի, որի մէջ դրած էր բերդը։ Իսկ երեք բանակների իւրաքանչիւրը զետեղված էր այդ եռանկիւնին կազմող գծերի վրա, որոնք ուրիշ ոչինչ չէին, եթէ ոչ, խոր ընկած և անտառախիտ լեռներով պատսպարված ձորեր, որոնց միջով անցնում էին յիշեալ երկու գետերը։ Այսպիսով բերդից ելքը դէպի ամեն կողմ փակված էր։ Ասլամազ-Կուլի-խանը իր ամրոցում պաշարված էր, որպէս մի գազան իր որջի մէջ։ Որսորդները սովորաբար գազանների որջի մուտքի առջև մուխ են դնում, որ նրանք դուրս գան իրանց դարանից։ Այդ միջոցի փոխարէն ծառայում էր հայոց թնդանօթների ծուխը, որ աւելի թանձրացնում էր դիւերային մթութիւնը։

Դաւիթ-բէկի վրանի վարագոյրները իջեցրած էին։ Նա միայնակ էր իր վրանում, որպէս մի օտարա-

գայ գրաւման բնաւորութեան և կազմակերպութեան մասին։ Մասնացոյց անելով Բ. Դրան դրացիութեան անյարմարութիւնների վրա, Բրօլի յիշեցնում է Մուշէի յայտնի խօսքերը. „եթէ Ցունիսը գոյութիւն չունենար, պէտք էր նրան հնարել։“ Նրա կարծիքով Բօրդօի դաշնագիրը կարող է վերաքննութեան ենթարկվել և պահանջում է, որ կառավարութիւնը պարլամենտի քննութեան այնպիսի հարցեր չառաջարկէ, որոնք կառավարութենից արդէն մշակված են։ Պատասխանելով Բրօլիին Գամբետտա գովեց սենատը և մասնացոյց եղաւ, թէ այդ հիմնարկութիւնը որքան նշանաւոր է հանրապետութեան համար։ Մինիստրների խորհրդի նախագահը խոստովանում է սենատի անհրաժեշտութիւնը և պնդում է, որ ինքը աշխատում է համբացնել սենատի դրութիւնը։ Այնուհետև Գամբետտա մերժեց իր կառավարութեան համերաշխութիւնը նախկին մինիստրութեան հետ և խոստացաւ Ցունիսի կառավարութեան մասին օրինագիծներ ներկայացնել, հէնց որ այդ երկիրը խաղաղացրած կը լինի։ Գամբետտա ցանկանում է հեռաքրքրված պետութիւնների հետ համաձայնութիւն կայացնել Ցունիսի պարտքերի վերաբերութեամբ, ինչպէս որ այդ գործը կատարված է եգիպտական ֆինանսների վերաբերութեամբ։ Ինչ կը վերաբերի հարցի դիպլոմատիական կողմին, Գամբետտա յոյս ունի, որ օտար պետութիւնները դժուարութիւններ չեն ծագեցնի։ Վերջը Գամբետտա նկատեց, որ Ֆրանսիան Բօրդօի դաշնագրով կապված է մինչ այն ժամանակ, երբ նա միջոց կունենայ ազատվել բէյի վերաբերութեամբ ունեցած պարտաւորութիւններից առանց ոչնչացնելու դաշնագիրը, այլ ճշդութեամբ որոշելով նրա կէտերը, որովհետև, Գամբետտայի կարծիքով, Ցունիսի վերակազմութիւնը չի խանգարի նրա անկախութեանը։

Սենատի նախագահ Լէօն Սէ մի երկու ճառ արտասանեց սենատի անդամներին ընտրող հաւատարմատարների առաջ։ Սէ իր միջի այլոց մեկնեց իր յարաբերութիւնները այժմեան մինիստրութեան հետ, որի անդամ նա չը դարձաւ, որովհետև ինքն անհամաձայնութիւններ ունեցաւ Գամբետտայի հետ տնտեսական և ֆինանսական մի քանի հարցերի վերաբերութեամբ։ Այնուհետև Լէօն Սէ բացարձակ խօսեց սենատի վերանորոգման մասին։ Նրա կարծիքով, սենատի համապատասխան վերանորոգութիւնը շատ օգտակար և մինչև անգամ անհրաժեշտ է։ Նա կատարելապէս համաձայն է, որ այդ նպատակով սահմանադրութիւնը վերաքննվի։ Լէօն Սէյի ճառը հանդիսացնող ապաւորութիւն է գործում, ցոյց տալով, որ սենատի բարեմիտ մասը պատրաստ է ենթարկվել վերանորոգութեանը, որպէս զի անհամաձայնութիւն չը ծագի պատգամաւորների ժողովի և կառավարութեան մի կողմից և սենատի մէջ միւս կողմից։

ԻՏԱԼԻԱ

Իտալական պատգամաւորների ժողովը դեկտեմբերի 7-ին չափազանց բազմամարդ էր, որովհետև այդ օրը սպասվում էր մինիստր Մանչինիի բացատրութիւնը իշխան Բիսմարկի Իտալիայի համար թշնամական նկատողութիւնների վերաբերութեամբ։ „Վեց ամիս սրանից առաջ, ասաց Մանչինի, Իտալիայի դրութիւնը չափազանց դժուար էր։ Միջերկրական ծովի վրա պատահած անցքերը վատացրին Իտալիայի և Ֆրանսիայի յարաբերութիւնները։ Գերմանիայի և Աւստրօ-Ունգարիայի կողմից սառնութիւն էր նկատվում։ Մեր դրութիւնը Բերլինի կոնգրէսի ժամանակ պահանջում էր բարեկամական յարաբերութիւններ ունենալ Գերմանիայի և Աւստրիայի հետ, որոնք խաղաղութեան գլխաւոր նեցուկն են կազմում։ Հասարակական կարծիքը մեզ Վիէննա էր ուղարկում, որտեղից ճանապարհ էր բացվում դէպի Բերլին։ Մի և նոյն ժամանակ մենք ի նկատի չունէինք որ և է դաշնակցութիւն. յարձակողական և պաշտպանողական դաշնակցութիւնները մեր ժամանակի ոգուն հակառակ են։ Բայց մեզ համար անհրաժեշտ էր բանակցութիւններ սկսել Վիէննայի մէջ, որպէս զի կարողանայինք նրանց շարունակել Բերլինի մէջ։ Թագաւորի ճանապարհորդութիւնը Վիէննա քաղաքական նպատակ ունէր։ Վիէննայի մէջ ոչ մի ակնարկութիւն չարվեցաւ, որ մեր ինքնասիրութեան դէմ լինէր։ Այնտեղ կատարելապէս հաւատում էին, որ մենք պէտք է հաւատարիմ մնանք դաշնագրին։ Վիէննայի ազդարարութիւնը ոգևորութեամբ ողջունում էր թագաւորին և թագուհուն։ Այդ ճանապարհորդութիւնը ոչ մի երկրի համար թշնամական նպատակ չունէր։ Գերմանիան հաւանեց այդ քայլը և մեր յարաբերութիւնները գերմանական կառավարութեան հետ բարեկամական դարձան։ Հոկտեմբերի 24-ին Բերլինից մենք մի թուղթ ստացանք, որտեղ ուրախութեամբ յիշվում էր իտալական թագաւորի այցելութիւնը Վիէննային։ Ինչ կը վերաբերի իշխան Բիսմարկի բայխստագի մէջ արտասանած խօսքերին Իտալիայի մասին, նրանք ճարտասանական անհրաժեշտութիւն են կազմում Գերմանիայի ներքին գործերի վերաբերութեամբ։ Ես աւելորդ եմ համարում նրանց մասին երկարօրէն խօսել։ Այսքանը միայն կասեմ, որ այդ խօսքերը բոլորովին չեն վնասում Իտալիայի և Գերմանիայի բարեկամական յարաբերութիւններին։ Ես աւելորդ եմ համարում հաւատացնել, որ մեր միապետութիւնը կատարելապէս ամուր է։ Այդ կողմից ամենալաւ դատաւորը կարող է իտալական պարլամենտը լինել։ Մեր թագաւորող տան գոյութիւնը անխզելի կապերով կապված է իտալական սահմանադրութեան հետ։ Մեր հարաւային երևակայութիւնը չափազանց մեծ նշանակութիւն տուեց իշխան Բիսմարկի խօսքերին։ Շատ հաւանական է, որ նրա երկիւղը Իտալիայի ներքին քաղաքականութեան համար մեկնվում են հոգսերով մեր միապետութեան համար։ Բայց մենք կարող ենք ճնշել այն ցոյցերը, որոնք սպառնում են խանգարել արտաքին խաղաղութիւնը։“ Այնուհետև մինիստրը հաղորդեց, որ մի մասնաժողով է նշանակված յանցաւորներին յանձնելու մասին մի օրինագիծ կազմելու համար։ Մինգետտիի կարճ պատասխանից յետոյ Մանչինի ասեց, որ Իտալիան հետևում է խաղաղասէր քաղաքականութեանը։ Այնուհետև առաջին մինիստր Դեպրետիս խոստացաւ հաշիւ տալ Իտալիայի ներքին քաղաքականութեան մասին այն ժամանակ, երբ կը քննվի ներքին գործերի մինիստրութեան բիւրժետը։ Մանչինիի ճառը սառնութեամբ ընդունվեցաւ։ Երբ նա ասեց, թէ ինքը հաւատարմութեամբ է վերաբերվում Գամբետտայի կառավարութեանը, դահլիճի մէջ ծիծաղ բարձրացաւ և պատգամաւորներից շատերը բողոքեցին։ Արմատական պատգամաւոր կոմ Ֆերրարի նկատեց, որ Իտալիայի մէջ յետադիմութիւն է կատարվում արտաքին միջամտութեան շնորհիւ։ Բիսմարկ չէ խնայում ամբողջ ազատամիտ Եւրօպային։ Իտալական արմատականները դաւադիրներ չեն։ Նրանք հետևում են պատմական զարգացմանը։

ԳԵՐՄԱՆԻԱ

Դեկտեմբերի 10-ին գերմանական բայխստագի մէջ քննվում էր սոցիալիստների դէմ օրէնքի գործադրութեան մասին հաշիւը։ Պատգամաւոր Հազենկլեվեր ցաւակցութիւն յայտնեց, որ այդ օրէնքի հիման վրա պատժվում են բոլորովին անմեղ մարդիկ։ Այդ օրէնքի օգնութեամբ կառավարութիւնը կարողացաւ հեռացնել սոցիալական կուսակցութենից անյուսալի տարրերը, թողնելով նրան թարմ ոյժերը։ Վերջին ընտրութիւնները ապացուցին, որ սոցիալական կուսակցութիւնը ոչ թէ թուլացաւ, այլ աւելի մեծ ոյժ ստացաւ։ Սոցիալ-դեմոկրատներին մերժում են աշխատանքը նրանց քաղաքական համոզմունքների պատճառով։ Կառավարութիւնը իր կապալառուներին արգելում է սոցիալիստներին աշխատանք տալ, արգելում է ստորագրութիւններ յօգուտ այն բաւորների ընտանիքների, որոնք զրկված են աշխատանքից։ Յօգուտ ռուսահպատակ հրէաների փող են հաւաքում, գերմանացիներին վիրաւորելու պատճառով Բոհեմիայի մէջ մեծ բարկութիւն տիրեց, մինչդեռ սոցիալիստ բաւորներին չեն խնայում նոյն իսկ ազատամիտները։ Այդ ժամանակ պատգամաւոր Հենել բացականչեց. „ինչպիսի անամօթութիւն“ և նախագահից կարգի հրաւիրվեցաւ։ Այնուհետև Հազենկլեվեր ձգտում էր ապացուցանել, որ սոցիալիստների դէմ օրէնքը նպատակին չէ հասնում և որ „Freiheit“ և „Social-demokrat“ լրագիրները այդ օրէնքի հետևանքներ էին։ Նոյնպէս անօգուտ էր պաշարված դրութեան յայտնելը Համբուրգի, Այտոնի և Հարբուրգի մէջ։ Լայպցիգի մասնաժողովի հաշիւը ճիշդ չէ։ Սոցիալական կուսակցութիւնը մշտական կազմակերպութիւն չունի։ Սոցիալիստները ճանաչում են գործող օրէնքները, բայց նրանք միշտ կաշխատեն բացառական օ-

---

կան հիւր, որ խնդրել էր իրան չը խանգարեն։ Ճանապարհորդական փոքրիկ ծալովի լապտերը լուսաւորում էր վրանի ներսը։ Նա փաթաթված էր իր հաստ վերարկուի մէջ, որ ծառայում էր նրան և՛ որպէս օթոց, և՛ որպէս վերմակ։ Գլուքը ծնօտին դրած, թեք էր ընկած թանձր թաղիքի վրա, որ տարածված էր ճախնային ցամաք բոյսերի վրա։ Մի քանի պահապաններ շրջապատել էին նրա վրանը, և հեռու նստած, ծխում էին։ Իսկ թիկնապահները քնած էին առանձին վրանում, մի քանի քայլ հեռաւորութեան վրա. այստեղ ճրագ չէր վառվում։

Կոչտ, խստասիրտ զինուորը այս գիշեր դարձել էր փափկասիրտ, զգայուն, երևակայող։ Նրա յիշողութեան մէջ, մինը միւսից յետոյ, զարթնում էին այն օրվայ տխուր տպաւորութիւնները և լցնում էին նրա սիրտը ցաւալի զգացմունքներով։ Ցաղթութեան աջողութիւնը չէր ուրախացնում նրան. նա յաղթութիւններ շատ էր արած։ Նրան տխրեցնում էր իր հայրենիքի խորտակված փառքը և ներկայ թշուառութիւնը։

Մինչև Զեվու բերդը հասնելը, նա իր զօրքով անցել էր Հալիձորի միջով, որտեղից հոսում է նոյն անունով գետը։ Այդ խուլ, անդնդախոր ձորը կարելի է նմանեցնել մի երկայն, անվերջանալի, նեղ փողոցի, որի աջ և ձախ կողմերից, հսկայական բարձրութեամբ, կանգնած են պատի պէս ուղղաձիգ, անտառապատ լեռներ։ Այդ վիթխարի լեռների վրա նայելիս, մարդ կարծում է, թէ ծառերը բուսել են ամպերի վրա։ Այդ նեղ փողոցը, այդ մթին ձորը, այն անցքն է, որ տանում է դէպի Սիմեաց աշխարհի ներսը։—Դա Սիմեաց մեծ տան ահագին դալանն (կօրիդօրն) է։ Մեր նախնիքը նրան կոչում էին Կապան *) և այդ անունով կոչվում էր ամբողջ անտառապատ գաւառը, ուր բնակվում էին հայ մարդիկ, որ շատ չէին զանազանվում իրանց ծմակներում բնակվող վագրներից։

Կապան, այդ փոխաբերական բառի մէջ ամփոփվում է նրա սարսափելի նշանակութիւնը։ Կապան, նշանակում է՝ կապված, փակված անցք։ Կապան, դա անդնդախոր խոխոմների մի ցանց է, դա մի հրէշաւոր ծուղակ է, որի մէջ Սիմեաց աշխարհի իշխանները կաչկանդում էին թշնամու լեգէոնները։

Բայց ինչ էին այդ ահարկու ձորի փականքները, նրա կապանները։—Այդ բոլորը այնօր տեսաւ Դաւիթ-բէկը և այժմ նրանց վրա էր մտածում։

Նա տեսաւ Հալիձորի բերդը, իսկ նրա հանդէպ՝ Աչաղու բերդը։ *) Այդ երկու բերդերը, որպէս երկու վիթխարի պահակներ, կանգնած նեղ ձորի աջ և ձախ կողմերում, լեռների բարձրութիւնից մահ էին սպառնում յանդուգն թշնամուն, եթէ կը համարձակվէր այնտեղից անցնել։ Բայց այդ երկու բերդերի սոսկալի աւերակներն էին միայն մնացել։ Զանազան վասակները, Սահակը, Բարկէնը, հսկայ Գդիհոնը, Գրիգոր Հաջաց Նուբրակ՝ կոչվածը,—որոնք մի ժամանակ նրանց մեջից կրակ էին թափում պարսիկների, մոգոլների, արաբների վրա,—Բաղաց թագաւորութեան այդ հերոսները այժմ չը կային...

Ցիշեալ երկու բերդերի միջով անցնելով, նա մտաւ Բաղաբերդ քաղաքի աւերակների մէջ։ Դա Բաղաց թագաւորների մայրաքաղաքն էր։ Բնութիւնը հազիւ երբէք հրաշակերտել է մի այսպիսի ամրութիւն մարդկանց ապահովութեան համար։ Այդ ահռելի քաղաքը նմանում էր մի վիթխարի քարեղէն մեղուի, որի մէջ կողքերի փոխարէն ծառայում են ահագին պարսպաձև լեռները։ Բայց ինչ էր մնացել այնտեղ։ Թագաւորների, իշխանների խորտակված պալատները, հոյակապ եկեղեցիները, ամրոցների կիսաւեր աշտարակները,—բոլորը, ինչ որ յիշեցնում էր հին փառքը և մեծութիւնը,—ծածկված էին խուլ, մթին անտառի տակ։ Ցանարների միջից բուսել էին ահագին կաղնիներ, վեհապետների արքունիքի փշրանքները, խառնվելով քարափների կուրծքից պոկված, ցած գլորված ժայռերի հետ, ներկայացնում էին մի սարսափելի զանգուած։

Քարեղէն մեղուը, որի մէջ անմատչելի կերպով պահվում էր Բաղակի հռչակաւոր քաղաքը, այժմ ներկայացնում էր մի տխուր, քարեղէն դագաղ, որի մէջ վաղուց արդէն թաղված էր Սիմեաց աշխարհի մեռած մայրաքաղաքը...

Դաւիթ-բէկին հիացնում էր հին հայերի պատերազմական և՛ ռազմագիտական հանճարը։ Նա զարմանում էր, տեսնելով, թէ որ աստիճան նրանք օգուտ քաղել գիտէին իրանց աշխարհի բնական ամրութիւններից։ Ուր որ բնութիւնը մի բան թերի էր թողել, նրանք լրացնում էին արհեստական ամրութիւններով։ Բայց ինչ էր պատճառը, որ նոյն իսկ ամրութիւնները նրանց գերեզմանը դարձան։— Ահա այդ հանելուկի վրա էր մտածում նա։

Բաղաբերդը *) իսկապէս դրած էր մի քարեղէն մեղուի մէջ, ահագին լեռներից և ապառաժներից կազմված մեղուի մէջ։ Երկու ծայրերից երկու նեղ փապարներ միայն կարող էին տանել դէպի մեղուի ներսը, այսինքն դէպի քաղաքը։ Այդ նեղ փապարներից մէկը, ինչպէս տեսանք, ամրացրած էր երկու բերդերով Աչաղու-բերդով և Հալիձորի բերդով։ Երկուսն էլ կանգնած էին միմեանց հանդէպ, լեռնային բարձրաւանդակների վրա։ Քաղաքի միւս ծայրի անցքը նոյնպէս ամրացրած էր երկու բերդերով, մինը կոչվում էր Բաղակայ—քար, միւսը Շլորուտ։ Այդ երկու բերդերը նոյնպէս կանգնած էին մինը միւսի հանդէպ, մէջտեղից թողնելով նեղ փապարը, որտեղից միայն կարելի էր մտնել քաղաքը։ Այստեղ էր

*) Այժմ կոչվում է Ղափան։

*) Այդ բերդը այժմ կոչվում է Ղըր-Ղալայ։

*) Բաղաբերդը հիմնել է Բաղակ իշխանը, որը Սիսակի տոհմից էր։